

Ճ Շ Տ ՈՒ Մ Ն Ե Ր

Մ Ի Ն Ա Ս Ա Մ Թ Ե Ց Ի Ի Մ Ա Ս Ի Ն

(ՆԻԻԹԵՐ՝ ՉՆՔՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ)

Մինաս Ամթեցի, նախ Երուսաղէմի Հայոց աթոռակից Պատրիարք (1691-98), յետոյ՝ բնորեալ Պատրիարք (1698-1704, բնդհատումով մը, դժբախտ պարագաներու ներքոյ)¹, միջին դարու հայ հոգեւորականութեան ամէնէն հեռաքրքրական դէմքերէն մէկն է: Անոր մասին գրած են՝ ծանօթ պատմագէտ-բանասէրներ՝ Տիգրանեան շ. Թ. Սարգսնեանց, Մկրտիչ Եպս. Աղաւունի, Արտուրդ Արք. Սրբմէկեան, Աստուածատուր Եպս. Տէր Յովհաննիսեանց, Մեսրոպ Եպս. Նշանեան, շ. Գ. Գալէմբարեան, Փրոֆ. Հրաչեայ Աճառեան, Լէօ, շ. Ն. Ակիւնեան եւ Ա. Ալլոյօյաճեան:

Մեր նիւթէն դուրս բլլալով անդրադարձումը վերոյիշեալ հեղինակներէն շատերուն գրութեանց, քանի որ անոնք չօգտօգտած չեն Ամթեցիի Չնքուշի մէջ անցուցած կեանքն բնդհանրապէս եւ Չրնքուշի անոր առաջնորդութիւնը մասնաւորապէս, այս յօդուածով պիտի մտնանանէնք միայն վերջին երկուքին՝ շ. Ն. Ակիւնեանի եւ Ա. Ալլոյօյաճեանի գրութեանց Չնքուշի վերաբերեալ մասերուն յայտնի սխալները:

Բնչպէս իր անունը կը բացայայտէ, Մինաս վարդապետ՝ Ամթեցի (Տիգրանակերտցի) էր: Սակայն Չնքուշի վանքի պատմագիր Տէր Մովսէսէն եւ նոյնիւնքն Մինաս Ամթեցիէն ստորեւ մեր կատարելիք մէջբերումները ցոյց կու տան՝ թէ Մինաս Ամթեցի ի մանկութենէ բերուած էր Չնքուշ, սրբեկրուած Չնքուշցիի մը

կողմէ, մեծցած ու կրթուած էր Չնքուշի Սիրահայեաց Ս. Աստուածածին վանքի եւ Ս. Կարապետ եկեղեցւոյ հովանիին ներքեւ, եղած էր առաջնորդ-վանահայր Չնքուշի եւ իր անձին վրայ պահած էր այդ տիպոսը՝ նոյնիսկ Երուսաղէմի իր պատրիարքութեան տարիներուն...:

Ամէնէն առջ կարգանք մեր վանքի արժանահաւատ պատմիչ Տ. Մովսէսի սողերը. (Թորոս Աղբար, Բ.էն այս և հետագայ մեր մէջբերումները կը կատարենք գրաբարը աշխարհաբարի վերածելով):

«ՌձԻԸ (1679) բուականին Մարկոս վարդապետը վախճանեցաւ եւ այդ բուականին (վանահայր-Առաջնորդի) արքունը յաջորդեց իր ձեռնատուն աշակերտը՝ Յամբեցի Մինաս վարդապետը, որ մանկութեան ժամանակ բերուած էր եւ որդեգիր տրուած ունի Շէնֆուշցի խաչատուրի, որ եւ նա, իր համեստ բնաւորութեան համաձայն, կրքուեցաւ եւ ստրկեցաւ իր ուսուցչին՝ Մարկոս քաջ եպիսկոպոսին ֆով, եւ յետոյ ժառանգեց իր (հոգեւոր) հոր արքունը, եւ յետոյ երթալով Ս. Էջմիածին, 24 տարի նուիրակութեամբ շրջագայեցաւ, եւ յետոյ ժառանգեց Կոստանդուպոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքական արքունը: Այն տեսն Ս. Երուսաղէմ տանելով իր եղբորորդին (սա՛ղիւնիք որդեգրող խաչատուրի բռուն է)

1. Չենք ծանրանար այս կէտերուն վրայ, մեր նիւթէն դուրս բլլալով: